/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Գևորգյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Բելգիա / Բրյուսել / 17.06.2019թ.

- **Նպատակը**

«Ակտիվ ծերացման ինդեքս» խորագրով շահառուների հանդիպում՝ կազմակերպված ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ) ֆինանսավորմամբ:

- **Քննարկված թեմաները**

Շահառուների մեկօրյա հանդիպման ծրագրի շրջանակում քննարկվել են հետևյալ թեմաները.

1. Ակտիվ ծերացման ինդեքս (ԱԾԻ), 2008-2016թթ. Ակտիվ ծերացման ինդեքսի 2019թ. զեկույցի շնորհանդես.
2. Ինչպես հաշվարկել ակտիվ ծերացման ինդեքսի ցուցանիշը, երբ տվյալները սուղ են. մեթոդաբանական ուղեցույցի ներկայացում և քննարկում.
3. Պանելային քննարկումներ ակտիվ ծերացման ինդեքսի ցուցանիշի սպառող-շահառուների հետ.
4. Ակտիվ ծերացման ինդեքսի վեբ-գործիքի շնորհանդես՝ հեղինակային խմբի ներկայացմամբ.
5. Ինտերակտիվ վարժություններ և հարցուպատասխան:
6. Կայուն զարգացման 2030թ. օրակարգի իրականացումը ժողովրդագրական հեռանկարների տեսանկյունից.

Շահառուների հանդիպման նպատակներից էր մասնակից երկրների միջև փոխանակել Ակտիվ ծերացման ինդեքսի վիճակագրության և դրա հաշվարկի հետ կապված մարտահրավերների, դրանց հաղթահարմանն ուղղված փորձը, հիմնական շահառու-ներկայացուցիչների հետ քննարկել ցուցանիշի կիրառելիության հետ կապված սահմանափակումները և առաջարկվող մոտեցումները:

Ակտիվ ծերացման ինդեքսը գործիք է, որի նպատակն է վիճակագրական չափման ենթարկել ակտիվ և առողջ ծերացման համար տարեցների չօգտագործված ներուժը: Այն չափում է տարեցների ինքնուրույն կյանքով ապրելու մակարդակը, այն է՝ մասնակցությունը վարձատրվող զբաղվածության մեջ, ներգրավվածությունը հասարակական գործունեության մեջ և նրանց ակտիվ ծերանալու կարողությունը: Ընդ որում, որքան բարձր արժեք ունի ցուցանիշը, այնքան դրական է ակտիվ ծերացման արդյունքը: Այն յուրահատուկ գործիք է, որը թույլ է տալիս շատ հստակ ախտորոշել այն ոլորտները, որոնք առանձնակի ուշադրության կարիք ունեն՝ հետագա ձեռքբերումներ արձանագրելու համար:

Հանդիպումն առանձնակի կարևոր էր ցուցանիշի այժմեականության տեսանկյունից, քանի որ համաշխարհային մակարդակով ներկայումս ընթացող ժողովրդագրական փոփոխությունները

ինչպես հնարավորություններ, այնպես էլ մարտահրավերներ են առաջացնում տարբեր ոլորտների քաղաքականությունների մշակման և իրականացման համար՝ մեկ անգամ ևս կարևորելով գենդերային հավասարության և սերունդների համերաշխության անհրաժեշտությունը:

Հանդիպման շրջանակում ներկայացվեցին ԱԾԻ-ի օգտագործման վրա հիմնված ուսումնասիրություններ՝ քաղաքականության համապատասխան գործիքակազմի միջոցով տարբեր մակարդակներում ի հայտ բերելու ակտիվ ծերացման արդյունքների բարելավման ուղիները:

Աշխատանքային հանդիպումը եզրափակվեց ակտիվ ծերացման ինդեքսի վիճակագրության կատարելագործման ուղղությամբ հետագա աշխատանքների և քննարկվելիք հարցերի շրջանակի հստակեցմամբ՝ հաշվի առնելով դրանց արդիականությունը և քանակական գնահատման կարևորությունը:

Նշումներ

Հանդիպման մասնակցում էին հետազոտողներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, քաղաքականություն մշակողներ և այլ շահագրգիռ կողմեր, ովքեր հետաքրքրված են Ակտիվ ծերացման ինդեքսի օգտագործմամբ, ծերացման և տարեցների մասին գիտելիքներն ընդլայնելու և ավելի լավ քաղաքականության մշակման համար:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել են ՄԱԿ-ի ԵՏՀ կողմից:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյան